



**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ**

2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն 2009 թվականին ապահովել է “Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի N 40-Ն որոշմամբ հաստատված N 1 և N 2 հավելվածներում ընդգրկված գերակա խնդիրների և միջոցառումների իրականացումն ամբողջությամբ:

2009 թվականին անշարժ գույքի շուկայում առկա խնդիրների լուծման և նոր ծրագրային աշխատանքների հետ մեկտեղ կարևորվել է նաև այնպիսի միջոցառումների իրականացումը, որոնք ուղղված են եղել անշարժ գույքի շուկայի զարգացման համար բարենպաստ միջավայրի ստեղծմանը և համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացվող ընթացիկ և պետական բյուջեից ֆինանսավորվող նպատակային ծրագրերի իրականացում

“Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բյուջետային հատկացումների հաշվին կոմիտեի ղեկավարությամբ իրականացվում է 9 ծրագրային աշխատանք (ներկայացված են 3-րդից 10-երորդ էջերում), որոնք հաստատվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 5-ի “Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող՝ անշարժ գույքի կադաստրի զարգացման 2009 թվականի համալիր ծրագիրը հաստատելու մասին” N 247-Ն որոշմամբ:

Աշխատանքային ծրագրերի բյուջետային ֆինանսավորման գումարը տարեսկզբին հաստատվել է 543 470,4 հազար դրամի չափով, որը ճշտվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 26-ի N 302-Ն որոշման արդյունքում և **55 000.0** հազար դրամի չափով ծախսերը կասեցվել են: Հաշվետու ժամանակաշրջանի համար նախատեսված ֆինանսավորման ճշտված գումարը կազմել է **488 470.4** հազար դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է շուրջ 33%-ով: Փաստացի կատարված աշխատանքների

գումարը 2009 թվականին կազմել է 473 047,9 հազար դրամ՝ նախատեսված կատարվելիք աշխատանքների շուրջ 97%-ը:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված աշխատանքների ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները՝ ըստ ոլորտների հետևյալն է.

Գեոդեզիա և քարտեզագրություն

1.Օրագրի անվանումը՝ “Աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքներ”:

Իրականացման նպատակը՝ Հայաստանի Հանրապետության աշխարհագրական անվանումների քարտադարանի վարում և թարմացում, Աշխարհի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուի նախապատրաստում:

Նախատեսված ֆինանսավորման գումարը՝ 12 000,0 հազար դրամ, փաստացի կատարված աշխատանքների գումարը՝ 12 000,0 հազար դրամ կամ նախատեսված աշխատանքների 100%-ը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են ՀՀ աշխարհագրական օբյեկտների անվանումների հաշվառման ու գրանցման, պետական քարտադարանի վարման և թարմացման աշխատանքները, ինչպես նաև ՀՀ սահմաններից դուրս գտնվող աշխարհագրական անվանումների տեղեկատվական բանկի ստեղծման՝ Աշխարհի աշխարհագրական անվանումների պաշտոնական տեղեկատուի նախապատրաստման աշխատանքները: Հավաքագրվել է մոտ՝ 65 000 աշխարհագրական օբյեկտի անվանում:

2.Օրագրի անվանումը՝ “Պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների ստեղծման և օդալուսանկարահանման աշխատանքներ”:

Իրականացման նպատակը՝ Հայաստանի Հանրապետության պետական մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների թարմացում, ինչպես նաև ԼՂՀ պետական մասշտաբային շարքի բազային 1:10000 և 1:25000 մասշտաբների տեղագրական քարտեզների ստեղծում:

Նախատեսված ֆինանսավորման գումարը՝ 179 124,4 հազար դրամ, փաստացի կատարված աշխատանքների գումարը՝ 166 909,2 հազար դրամ կամ նախատեսված աշխատանքների 93%-ը: Թերակատարումը կազմել է 12 215,2 հազար դրամ, որը պայմանավորված է եղանակային անբարենպաստ պայմանների հետևանքով չիրականացված տիեզերալուսանկարահանման աշխատանքների հետ:

Իրականացվել է Հայաստանի Հանրապետության պետական մասշտաբային շարքի 1:10000 մասշտաբի 670 թերթ տեղագրական քարտեզների և դրանց տեղեկամատյանների գեոդեզիական

կետերով և աշխարհագրական անվանումներով համալրման և պետական մասշտաբային շարքի 78 թերթ տեղագրական քարտեզների թարմացման աշխատանքներ:

ԼՂՀ-ի տարածքում կատարվել է 6102.3 քառ.կմ տարածքի տիեզերալուսանկարահանման նյութերի պլանաբարձրունքային հիմքի ստեղծման և վերծանման, մոտ 4430 քառ.կմ տարածքի նյութերի գեոդեզիական խտացման, հավասարակշռման և օրթոֆոտոների ստացման, 110 թերթ 1:10000 մասշտաբի և 35 թերթ 1:25000 մասշտաբի տեղագրական քարտեզների թվայնացման աշխատանքներ:

3. Ծրագրի անվանումը՝ “Երկրատեղեկատվական համակարգի նախագծում և ներդրում”:

Իրականացման նպատակը՝ Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բազային երկրատեղեկատվական համակարգի ստեղծման աշխատանքներ:

Նախատեսված ֆինանսավորման գումարը՝ 87 000,0 հազար դրամ, փաստացի կատարված աշխատանքների գումարը՝ 87 000.0 հազար դրամ կամ նախատեսված աշխատանքների 100%-ը:

Ծրագրի շրջանակներում կատարվել է Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի 4841 հա տարածքի կադաստրային և տեղագրական հատակագծերի համադրման, անճշտությունների հանութագրման, թարմացման, ստորգետնյա մայրուղային հաղորդակցուղիների հանութագրման, երկրատեղեկատվական համակարգի տվյալների հավաքագրման, շերտերի ստեղծման և դասակարգման աշխատանքներ:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգի 2009 թվականի ծախսերի շրջանակում գեոդեզիայի ուղղությամբ մերձերևանյան գեոդինամիկական պոլիգոնում խզվածքների վրա իրականացվել են՝ GPS 24 հիմնակետերի դիտարկման, հավասարակշռման և կոորդինատների հաշվարկման, խզվածքներով I դասի 124.9 գծ.կմ նիվելիրացման և նյութերի մշակման, 40 կետերի գրավիմետրիական և տեխնիկական հաշվետվության կազմման աշխատանքներ, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 24 677.0 հազար դրամ:

Գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում բացի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային ծրագրից իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները.

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2009 թվականին որպես գերակա խնդիր հաստատված “ՀՀ պետական մասշտաբային շարքի տեղագրական և կադաստրային քարտեզների տեղափոխումը WGS-84 համաշխարհային գեոդեզիական կոորդինատային համակարգ” միջոցառումների իրականացման շրջանակներում, WGS-84 համաշխարհային

գեոդեզիական կոորդինատային համակարգում բաց հրատարակման տեղագրական և կադաստրային քարտեզների ստեղծման նպատակով կատարվել են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքի գեոդեզիական կետերի վերահաշվարկման և տեղագրական ու կադաստրային քարտեզները WGS-84 համաշխարհային գեոդեզիական բաց կոորդինատային համակարգ տեղափոխման աշխատանքներ, որի արդյունքում ստեղծված բաց հրատարակման տեղագրական և կադաստրային քարտեզները հասանելի են դարձել օգտագործողների լայն շրջանակների համար և կարող են տրամադրվել ըստ անհրաժեշտության:

Թեմատիկ քարտեզագրության ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում “Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն” ՊՈԱԿ-ի կողմից նախապատրաստվել և հրատարակվել են Լեռնային Ղարաբաղի և Երևան քաղաքի պատմաաշխարհագրական ատլասները:

Նախապատրաստվել են հրատարակման Հայաստանի Ազգային ատլասի անգլերեն լեզվով Ա և Բ հատորները, Երևան քաղաքի հասցեների ատլասը, ինչպես նաև 18 անվանումներով թեմատիկ քարտեզներ:

ՀՀ մարզերում սեփականաշնորհված գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման շրջանակներում քաղաքացիներին տրամադրված սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման վկայականներում և փաստացի օգտագործվող հողամասի մակերեսների չափերի միջև առաջացած տարբերությունների խնդիրները պարզաբանելու նպատակով ՀՀ բոլոր մարզերում կատարվել են ուսումնասիրման աշխատանքներ:

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում

• Իրավունքների պետական գրանցում

Հաշվետու ժամանակահատվածում Կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների **154.462 պետական գրանցում, որից** սեփականության իրավունքի **98296**, հիփոթեքի **13779**, վարձակալության, հողամասի կառուցապատման և անհատույց օգտագործման իրավունքի **13779** պետական գրանցում, անշարժ գույքի նկատմամբ սահմանափակումների **25536** պետական գրանցում:

• **Տեղեկատվության համակարգում**

4.Օրագրի անվանումը՝ “Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման ծառայություններ պետական կառավարման մարմիններին”:

Իրականացման նպատակը՝ Պետական կառավարման մարմիններին անշարժ գույքի կադաստրի տվյալների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:

Նախատեսված ֆինանսավորման գումարը՝ 30 000,0 հազար դրամ, փաստացի կատարված աշխատանքների գումարը՝ 30 000.0 հազար դրամ կամ նախատեսված աշխատանքների 100%-ը:

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 9-ի “Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման կարգը հաստատելու մասին” N 155 որոշման 5-րդ կետի պահանջների համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների և “Տեղեկատվական կենտրոն” ստորաբաժանման կողմից անվճար տրամադրվել է **93418** տեղեկանք և **3804** էջ քսերոպատճեն:

ՀՀ ԿԲ Ֆինանսական դիտարկումների կենտրոն է ներկայացվել պարտադիր տեղեկացման գործարքների վերաբերյալ թվով **487** հաշվետվություն:

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում պարբերաբար ամփոփվել են՝

➤ Երևան քաղաքում ինքնակամ կառույցների նկատմամբ պետության և համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցման /ամփոփ տեղեկանքը կցվում է՝ հավելված 1/,

➤ Երևան քաղաքում ինքնակամ կառույցների օրինականացման որոշումներից և օրինականացված կառույցների և դրանցով զբաղեցված հողամասերի օտարման պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցման տվյալները /ամփոփ տեղեկանքը կցվում է՝ հավելված 2/,

➤ Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման և կառուցապատման իրավունքի տրամադրման պետական գրանցումների տվյալները /ամփոփ տեղեկանքը կցվում է՝ հավելված 3/,

➤ “Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին” ՀՀ օրենքի հիման վրա իրականացված պետական գրանցումների տվյալները /ամփոփ տեղեկանքը կցվում է՝ հավելված 4/:

• Շարժական գույքի գրավի և լիզինգի պայմանագրերով վարձակալության իրավունքի գրանցում

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է շարժական գույքի գրավի և լիզինգի պայմանագրերից ծագող վարձակալության իրավունքի 3402 պետական գրանցում, տրամադրվել է գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ 257 տեղեկանք:

Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացում և տեղեկատվական բանկի ստեղծում

5.Ծրագրի անվանումը՝ “Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ծառայություններ”:

Իրականացման նպատակը՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գերատեսչական ցանցի սպասարկում:

Նախատեսված ֆինանսավորման գումարը՝ 30 000,0 հազար դրամ, փաստացի կատարված աշխատանքների գումարը՝ 27 048,8 հազար դրամ կամ նախատեսված աշխատանքների 90%-ը:

Թերակատարումը կազմել է 2 951,2 հազար դրամ, որը պայմանավորված է ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար նախահաշվի հաստատված գումարից ավելի ցածր արժեքով կնքված պայմանագրի գումարի տարբերությամբ:

6. Ծրագրի անվանումը՝ “ Ավտոմատացված համակարգի ներդրում”:

Իրականացման նպատակը՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գործունեության համար անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի և լիցենզիոն ծրագրային փաթեթների ձեռքբերում:

Նախատեսված ֆինանսավորման գումարը՝ 56 810,0 հազար դրամ, փաստացի կատարված աշխատանքների գումարը՝ 56 607,9 հազար դրամ կամ նախատեսված աշխատանքների շուրջ 100%-ը:

Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել 61 համակարգիչ, 15 տպիչ, 6 պատճենահանման մեքենա և այլ հարակից սարքեր, ինչպես նաև՝ 802 օրինակ լիցենզիոն ծրագրային փաթեթ՝ 300 Microsoft Windows Pro 7, 2 օրինակ ինտերնետի աշխատանքն ապահովող ծրագրեր WinRoute և MailServer:

Կոմիտեի համակարգի պահպանման ծախսերի շրջանակներում աշխատանքներ են իրականացվել ՄԱՅԼԲԸՐԻ ծրագրային փաթեթի ներդրման և աշխատակիցների ուսուցման ուղղությամբ, ինչը կապահովի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդրումը: Փաստաթղթաշրջանառության ավտոմատացումը հնարավորություն կտա խուսափել ժամանակի ոչ էֆեկտիվ ծախսումից, կբարձրացնի աշխատանքային գործունեության արդյունավետությունը, հնարավորություն կտա իրականացնել փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային արխիվացում:

ՄԱՅԼԲԸՐԻ համակարգը նախատեսված է հիմնարկության ներսում շրջանառության մեջ գտնվող մուտքի և ելքի փաստաթղթերի, տվյալ հիմնարկության ու նրա ստորաբաժանումների ղեկավարների հանձնարարականների և տեղեկատվական այլ հոսքերի հաշվառման, ըստ ենթակայության դրանց փոխանցման ու կատարման ընթացքի վերահսկման, ինչպես նաև տվյալների շտեմարանում հաշվառված տեղեկատվության հիման վրա սահմանված ձևատեսքերով հաշվետվությունների ձևավորման գործընթացը ավտոմատացնելու համար:

• **Կադաստրային գործերի էլեկտրոնային արխիվների ստեղծում**

2009 թվականի ընթացքում շարունակվել են կադաստրային (արխիվային) գործերի փաստաթղթերի էլեկտրոնային արխիվների ստեղծման աշխատանքները:

Փաստաթղթերի տեսաներածման աշխատանքներն իրականացնող տարածքային ստորաբաժանումների կողմից հաշվետու ժամանակահատվածում ամբողջությամբ ավարտվել են 416 համայնքերի կադաստրային գործերի արխիվացման աշխատանքները, որտեղ արխիվացվել է շուրջ **808 818** կադաստրային գործ, տեսաներածվել է կադաստրային գործերի **14 970 076** փաստաթուղթ:

Ընդհանուր առմամբ առ 01.01.2010թ. կադաստրային գործերի էլեկտրոնային արխիվացման հիմնական փուլի աշխատանքներն ավարտվել են Երևան քաղաքում, ինչպես նաև հանրապետության **738** համայնքներում: Մասնավորապես, բացի Երևան քաղաքից, հիմնական փուլի աշխատանքները արդեն իսկ ամբողջությամբ ավարտվել են Կոմիտեի աշխատակազմի Ախուրյանի, Աշոցքի, Ամասիայի, Վեդու, Արարատի, Մասիսի, Վաղարշապատի, Մայիսակի, Ստեփանավանի, Վանաձորի, Աբովյանի, Հրազդանի, Անիի, Գյումրիի և Իջևանի տարածքային ստորաբաժանումներում:

Հողաշինարարություն

7.Ծրագրի անվանումը՝ «Սահմանների ամրացման ծառայություններ»:

Իրականացման նպատակը՝ ՀՀ վարչատարածքային միավորների՝ համայնքների, վարչական սահմանների ճշտում և ամրացում բնության մեջ:

Նախատեսված ֆինանսավորման գումարը՝ 58 536,0 հազար դրամ, փաստացի կատարված աշխատանքների գումարը՝ 58 536,0 հազար դրամ կամ նախատեսված աշխատանքների 100%-ը:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի 97 համայնքների կադաստրային, տեղագրական և համայնքների վարչական սահմանների նկարագրման, քարտեզների համադրման և դրա արդյունքում անճշտությունների ուղղման, վարչական սահմանների ամրացման աշխատանքներ:

Ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում ապահովվել է Արարատի մարզի «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների հիման վրա սահմանակից համայնքների միջև սահմանային հարցերի լուծման իրավական հիմքերի ստեղծումը, ինչպես նաև ՀՀ պետական գեոդեզիական ցանցում համայնքների սահմանների դիտարկված և հավասարակշռված շրջադարձային կետերի կոորդինատները՝ կապակցված պետական գեոդեզիական ցանցի հետ, որը հնարավորություն կտա կարգավորել ցանկացած վիճահարույց հողային և սահմանային վեճ:

Հողաշինարարության ոլորտում իրականացվել են նաև հետևյալ աշխատանքները՝

- ա) տրամադրվել է կարծիք 30 համայնքների հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների վերաբերյալ,
- բ) ուսումնասիրվել է 121 և կարծիք է տրամադրվել 94 համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների վերաբերյալ,
- գ) Արագածոտնի, Արարատի, Վայոց Ձորի, Տավուշի, Լոռու, Արմավիրի, Գեղարքունիքի մարզպետարաններում խորհրդակցություններ են անցկացվել մարզերի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարբեր կատեգորիաների հողերը մարզերի համայնքների վարչական սահմաններում ընդգրկելու ծրագրի վերաբերյալ,
- դ) ՀՀ մարզերի և համայնքների վարչական սահմանների նկարագրման աշխատանքների կարգավորման կառավարական հանձնաժողովի քննարկմանն են ներկայացվել համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող հողերը Արագածոտնի, Արարատի, Վայոց Ձորի,

Տավուշի, Լոռու, Արմավիրի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի համայնքների վարչական սահմաններում ընդգրկելու վերաբերյալ նախագծերը:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի աշխատանքներ

8. Ծրագրի անվանումը՝ « Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում»:

Իրականացման նպատակը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացվող գործառույթների թափանցիկության և մատչելիության ապահովում, բաց և հրապարակային աշխատանք, բնակչության և տեղական ինքնակառավարման մարմինների իրազեկում, տեղեկացվածության մակարդակի բարձրացում:

Նախատեսված ֆինանսավորման գումարը՝ 5 000,0 հազար դրամ, փաստացի կատարված աշխատանքների գումարը՝ 4 946,0 հազար դրամ կամ նախատեսված աշխատանքների 99%-ը:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացվող ընթացիկ և ծրագրային աշխատանքների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացման նպատակով ծրագրի շրջանակներում իրականացվել են՝

- ա) «Կադաստրի տեղեկագիր» ամսագրի պատրաստում և հրատարակում՝ 12 համար,
- բ) բացատրական բնույթի ծախսարսված կարված երկթերթ ուղեցույցների պատրաստում և տպագրում՝ 30000 հատ:

Իրականացվող գործառույթների թափանցիկության ապահովման համար ուղեցույցներում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացվող ընթացիկ և ծրագրային աշխատանքները:

գ) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներում իրականացվող գործառույթների թափանցիկության ապահովման և առկա թերությունների հայտնաբերման համար իրականացվել է գործող ընթացակարգերի մոնիթորինգ:

Անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումներ և կադաստրային գնահատում

9. Ծրագրի անվանումը՝ “ Հողամասերի, շենքերի և շինությունների համակարգված դիտարկումների և անշարժ գույքի շուկայի վերլուծությունների իրականացում”:

Իրականացման նպատակը՝ Անշարժ գույքի միասնական գնահատման մեթոդիկայի և կարգերի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում, գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գնահատման մեթոդիկայի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակում, աջակցում անշարժ գույքի շուկայի զարգացմանը:

Նախատեսված ֆինանսավորման գումարը՝ 30 000,0 հազար դրամ, փաստացի կատարված աշխատանքների գումարը՝ 30 000,0 հազար դրամ կամ նախատեսված աշխատանքների 100%-ը:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են՝

1. “Անշարժ գույքի շուկայի 2009թ. վերլուծությունների իրականացում” –ընդգրկումը՝ 2009թ. հունվար-նոյեմբերին իրականացված անշարժ գույքի շուկայի վիճակի և գնային իրավիճակի ուսումնասիրությունների և վերլուծությունների ժամանակահատվածները.

- 2008թ. դեկտեմբեր, 4-րդ եռամսյակ, 2-րդ կիսամյակ, տարեկան,

- 2009թ. հունվար, փետրվար, մարտ, 1-ին եռամսյակ, ապրիլ, մայիս, հունիս, 2-րդ եռամսյակ, 1-ին կիսամյակ, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, 3-րդ եռամսյակ, 9 ամիսներ, հոկտեմբեր, նոյեմբեր, 11 ամիսներ:

2. “Անշարժ գույքի՝ հողերի ու դրանց վրա գտնվող շենքերի, շինությունների համակարգված դիտարկումների իրականացում” –ընդգրկումը՝ 2008թ. 4-րդ, 2009թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների կտրվածքով իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների ժամանակահատվածները.

Անշարժ գույքի՝ հողերի և դրանց վրա գտնվող շենքերի, շինությունների համակարգված դիտարկումն իր մեջ ներառում է

- անշարժ գույքի շուկայում գնային իրավիճակի փոփոխությունների հետ պայմանավորված տարածագնահատման գոտիների փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

- գնային իրավիճակի վիճակագրական վերլուծությունների իրականացում, կադաստրային գնահատման բանաձևերի, ազդող էական գործոնների, բազային արժեքների և դրանց փոփոխման գործակիցների դուրսբերում:

3. “ՀՀ համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական հողատեսքերի 2009թ. համակարգված դիտարկումների իրականացում”–ընդգրկումը՝ 2008թ. 4-

րդ, 2009թ. 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների ուսումնասիրությունների և վերլուծությունների ժամանակահատվածները:

Ոլորտում իրականացվել են նաև՝

ա) ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ լրամշակվել է “Անշարժ գույքի հարկի մասին” ՀՀ օրենքի նախագիծը: “Անշարժ գույքի հարկի մասին” ՀՀ օրենքի նախագծի բաղկացուցիչ մասը կազմող գնահատման կարգերով և գործող կարգերով իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, բազմաբնակարան բնակելի շենքերում տեղակայված հասարակական նշանակության շինությունների, անհատական բնակելի տների, առանձին կանգնած հասարակական և արտադրական նշանակության անշարժ գույքի կադաստրային գնահատություններ, հաշվարկվել են հարկերի՝ գործող և առաջարկվող դրույքաչափերով, տարբերություններն ըստ Երևան քաղաքի և ըստ Մարզերի քաղաքային և որոշ գյուղական համայնքների,

բ) մշակվել է հողամասերի կադաստրային գնահատման ավտոմատ ծրագիր, որը տեղադրվել է կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումներում և կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում:

գ) “Անշարժ գույքի կադաստրային գնահատման արդյունքում թույլ տրված սխալների ուղղման հրահանգ”-ով սահմանված կարգով հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում Կոմիտեի տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացված կադաստրային արժեքների ուղղման վերաբերյալ տեղեկատվություն


ՏԵՂԵԿԱՆՔ 2009թ. ընթացքում տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացված կադաստրային արժեքների ուղղման վերաբերյալ /ըստ սխալների բնույթի/					
Ամիս	Ուղղված կադաստրային արժեքներ	Որից հաշվառման սխալի պատճառով	Որից գնահատման սխալի պատճառով	Որից գրանցման սխալի պատճառով	Որից քարտեզագրման սխալի պատճառով
2009թ. հունվար	74	44	30	0	0
2009թ. փետրվար	110	52	58	0	0
2009թ. մարտ	188	66	65	3	54
2009թ. ապրիլ	168	62	53	2	51
2009թ. մայիս	173	91	41	4	37
2009թ. հունիս	187	96	43	3	45
2009թ. հուլիս	168	98	42	1	27
2009թ. օգոստոս	203	142	35	0	26

2009թ.սեպտեմբեր	227	133	57	5	32
2009թ.հոկտեմբեր	224	123	60	4	37
2009թ.նոյեմբեր	318	151	118	0	49
2009թ.դեկտեմբեր	268	158	65	1	44
Ընդամենը	2308	1216	667	23	402

Անշարժ գույքի շուկա


Վերջին տարիներին աճում է անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը: Այսպես, 2000 թվականին՝ արձանագրվել են անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների 30228, 2001 թվականին՝ 44792, 2002 թվականին՝ 60874, 2003 թվականին՝ 71797, 2004 թվականին՝ 98345, 2005 թվականին՝ 122545, 2006 թվականին՝ 124568, 2007 թվականին՝ 155040, իսկ 2008 թվականին՝ 159367 պետական գրանցումներ: Սակայն համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը իր բացասական ազդեցությունն ունեցավ նաև մեր հանրապետության անշարժ գույքի շուկայի ակտիվության մակարդակի վրա, և արդյունքում 2009 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակը՝ (154462 միավոր), 2008 թվականի համեմատ նվազեց շուրջ 3.1%-ով (4905 միավոր), այդ թվում Երևանում նվազեց 6.0%-ով (3370 միավոր), իսկ մարզերում՝ 1.5%-ով (1535 միավոր):

**2000-2009թթ. անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից
ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական շարժընթացը և
աճման տոկոսաչափերը**




Անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակի աճին զուգահեռ աճում էին նաև անշարժ գույքի շուկայի ակտիվության մակարդակը առավել բնութագրող՝ անշարժ գույքի օտարման, գրավադրաման և վարձակալության գործարքները: Հատկանշական է, որ երբ 2009 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված օտարման և գրավադրաման գործարքները 2008 թվականի համեմատ նվազեցին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված վարձակալության գործարքները շարունակեցին աճել:

2000-2009թթ. անշարժ գույքի նկատմամբ իրականացված օտարման, գրավադրման և վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական շարժընթացները



2008 թվականի համեմատությամբ, 2009 թվականին փոփոխվել է անշարժ գույքի շուկայի ակտիվության աշխարհագրությունը: Տարեցտարի, Երևան քաղաքի համեմատությամբ, առավել մեծ քանակով անշարժ գույքի գործարքներ են արձանագրվում մարզերում: Օրինակ, եթե 2000 թվականին Հանրապետությունում գրանցված գործարքների միայն 48.0%-ն է գրանցվել մարզերում, 2004 թվականին՝ 55.6%-ը, 2008 թվականին՝ 64.6%-ը, ապա 2009 թվականին մարզերում գրանցվել է Հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների 65.7%-ը:

**2000-2009թթ. անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ց
ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական շարժընթացը և
աճման տոկոսաչափերը**



Հաշվառում

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.06թ. “Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին” N912 և “Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին” N731-Ն որոշումների պահանջների իրավունքների պետական գրանցման, տեղեկատվության տրամադրման ժամանակ ընթացիկ հաշվառման արդյունքում հայտնաբերվել և Երևանի քաղաքապետին է ներկայացվել շուրջ 6681 միավոր ինքնակամ կառուցված շենք, շինությունների վերաբերյալ տեղեկություններ:

Իրավունքների պետական գրանցման, տեղեկատվության տրամադրման ժամանակ ընթացիկ հաշվառման արդյունքում հայտնաբերված ինքնակամ կառուցված շենքեր, շինություններ, ինքնակամ գրադեցված հողամասերի 2007-2009թթ. համեմատական տվյալներ

ՀՀ կառավ. 18.05.06թ. N731 և 912 որոշումների պահանջների համաձայն հաշվառված ինքնակամներ	2007թ.	2008թ.	2009թ.	Համեմատականը 2007թ.-ի նկատմամբ	Համեմատականը 2008թ.-ի նկատմամբ
Հաշվառված ինքնակամներ	7030	10140	6681	-5.0%	-34.1%

ըստ գույքի տեսակների					
Հաշվառված ինքնակամներ ըստ գույքի հասցեների	5993	6752	4767	-20.4%	-29.4%

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 25.09.2008թ. N299 հրամանով հաստատված “Իրավունքների պետական գրանցում ստացած անշարժ գույքի /հողամասերի, շենքերի, շինությունների/ հաշվառման տվյալներում հայտնաբերված սխալների ուղղման” հրահանգի համաձայն ամփոփվել են կոմիտեի աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված տվյալները: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 1626 միավոր հաշվառման տվյալներում հայտնաբերված սխալների ուղղում՝ այդ թվում՝ որակական բնույթի 81 միավոր, քանակական բնույթի 1474 միավոր և տեխնիկական բնույթի 71 միավոր:

ՀՀ կառավարության 17.01.08թ. N17-Ս որոշման 10-րդ կետի պահանջների համաձայն ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից ներկայացված ցանկերի հիման վրա իրականացվել է 412 միավոր անշարժ գույքի՝ որպես պետական սեփականություն, իրավունքի պետական գրանցման աշխատանքները:

Իրականացվել են Հայաստանի Հանրապետության անվամբ /նախկին “Հայկական երկաթուղի” ՓԲԸ/ գրանցված և որոշակի ուղղումներ կատարելու նպատակով կոմիտեում գտնվող 46 միավոր սեփականության վկայականներում եղած սխալների ուղղման աշխատանքները, որից 34-ում կատարվել են բոլոր հնարավոր ուղղումները, մնացած խոչընդոտների վերաբերյալ տվյալները 01.12.09թ. քննարկվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և “Հարավկովկասյան երկաթուղի” ՓԲԸ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ և 04.12.09թ. սեփականության բոլոր վկայականները վերադարձվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը:

Ուսումնասիրվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ներկայացված 78 միավոր մերձատար երկաթուղագծերի ցանկում առկա ձեռնարկությունների տվյալները և դրա վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը:

Ուսումնասիրվել է նաև Կոմիտե ներկայացված 25 միավոր մերձատար երկաթուղագծերի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից կայացված հողհատկացման որոշումները և դրանց հիման վրա տրված քարտեզագրման հանույթները, որոնցից գրանցման ենթական են 9

միավոր անշարժ գույք, իսկ մնացած գույքերի առկա խոչընդոտների մասին տեղեկացվել են ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության և “Հարավկովկասյան երկաթուղի” ՓԲԸ-ի ներկայացուցիչները:

Կատարվել է քաղաքացիների շուրջ 250 դիմում-բողոքների քննարկում և նախապատրաստվել են դրանց պատասխանները, ուսումնասիրվել են պետական մարմինների, ինչպես նաև այլ կազմակերպությունների կողմից շուրջ 260 գրություններով բարձրացված հարցերը և նախապատրաստվել են դրանց պատասխանները: ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից ներկայացված “Հայաստանի Հանրապետության տարածքում բազմաբնակարան շենքերի անձնագրավորման ծրագիրը, անձնագրավորման իրականացման կարգը և անձնագրի ձևը հաստատելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի քննարկման շրջանակներում ճշտվել է ՀՀ տարածքում առկա բազմաբնակարան բնակելի շենքերի թվաքանակը և ներկայացվել ՀՀ քաղաքաշինության նախարարությանը:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 34-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, հրապարակվել է ՀՀ կառավարության կողմից 2008թ. դեկտեմբերի 18-ի N 1544-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2008թ հողային հաշվեկշռի տվյալները և տեղադրվել է կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայք էջում:

2008 թվականի համեմատ 2009թ. հաշվեկշռի նախապատրաստման աշխատանքների շրջանակներում կատարվել են ներկայացված փոփոխությունների հավաստիությունը ճշգրտելու աշխատանքներ Արմավիր, Վաղարշապատ, Վեդի, Արտաշատ, Աշտարակ, Մասիս, Աբովյան, Եղվարդ, Ապարան և Աշտարակ տարածքային ստորաբաժանումներում: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ներկայացվող հաշվետվություններում առկա են որոշ թերություններ՝ մասնավորապես հողամասի գործառնական նշանակությունը չի համապատասխանել նպատակային նշանակությանը, չի նշվել աճուրդով օտարված վարելահողի ոռոգելի լինելը կամ չլինելը, մի շարք դեպքերում հողատեսքը չի համապատասխանել աճուրդով օտարված հողամասի հողատեսքին և այլն:

Գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի /բազմամյա տնկարկների հիմնումների և քանդումների/ փոփոխությունների վերաբերյալ համայնքների ղեկավարների ներկայացրած տվյալների հավաստիությունը ստուգելու համար կատարվել են ուսումնասիրություններ Արմավիրի, Աշտարակի, Վաղարշապատի, Աբովյանի, Եղվարդի, Վեդու

և Արտաշատի տարածքային ստորաբաժանումներում և մի շարք համայնքներում: Բազմամյա տնկարկների հիմնումների և քանդումների վերաբերյալ ճշգրտված տվյալները մուտքագրվել են համակարգիչ և ամփոփվել՝ ընթացիկ հողային հաշվեկշռում ներառելու համար:

ՀՀ հողային ֆոնդում 2007-2009թ.թ. ընթացքում կատարված փոփոխությունների հիմնական ցուցանիշները ներկայացված են հետևյալ աղյուսակում՝

Համեմատական աղյուսակ
2007- 2009թվականների ՀՀ հողային հաշվեկշիռների ցուցանիշների
/հազար հեկտարով/

Տարեթիվը	Գյուղատնտեսական նշանակության հողեր, ընդամենը	այդ թվում		Բնակավայրերի հողեր	Արտադրական հողեր
		վարելահող	բազմամյա տնկարկ		
2007 թվական	2120.1	452.1	29.62	151.03	40.3
2008 թվական	2121.21	450.36	31.57	151.24	41.4
2009 թվական	2120.31	449.41	32.56	151.63	41.75
տարբերությունը՝ 2009-2008թթ.	-0.9	-0.95	0.99	0.39	0.35
տարբերությունը՝ 2009-2007թթ.	0.21	-2.69	2.94	0.6	1.45

Ամփոփվել է ՀՀ 2009թ. հողային հաշվեկշիռը, սահմանված կարգով համաձայնեցվել շահագրգիռ նախարարությունների հետ և ներկայացվել ՀՀ կառավարության քննարկմանը: Այն հաստատվել է ՀՀ կառավարության կողմից 23.09.2009թ. N 1095-Ն որոշմամբ:

Օրենսդրություն

2007 թվականին Կոմիտեի կողմից մշակվել և Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի ու Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն են ներկայացվել ներքոհիշյալ նորմատիվ իրավական ակտերը՝

1) “Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ.

2) “Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ.

3) “Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին” ՀՀ օրենքի նախագիծ,

4) “Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին” ՀՀ օրենքի նախագիծ՝ ՀՀ Կոտայքի մարզի 43, Շիրակի մարզի 50, Արմավիրի մարզի 21, Արարատի մարզի 36 և ՀՀ Վայոց Ձորի մարզի 36, ՀՀ Արագածոտնի մարզի 63, Գեղարքունիքի մարզի 82 և ՀՀ Լոռու մարզի 77 համայնքների վարչական սահմանների նկարագրություն: 5 մարզերի մասով օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է, իսկ Արագածոտնի, Գեղարքունիքի և Լոռու մարզերի վերաբերյալ օրենքի նախագիծը հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից և ներկայացվել Ազգային ժողով,

5) “Հողամասերի միավորման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը,

6) “Տիեզերական նկարահանումների պլանավորման, երկրի հեռահար զոնդավորման տվյալների ընդունման, մշակման և տրամադրման կարգը հաստատելու” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում (ընդունվել է 18.06.09թ. N 683-Ն).

7) “WGS -84 (ՎԻՋԻԷՍ-84) գեոդեզիական կոորդինատային համակարգում տեղագրական քարտեզների և հատակագծերի բաց հրատարակման ընթացակարգը կարգավորելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում (ընդունվել է 26.06.09թ. N 791-Ն).

8) “Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի փետրվարի 17-ի N 91 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում (ընդունվել է 23.07.09թ. N 846-Ն).

9) “Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թվականի նոյեմբերի 28-ի N 1930-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում (ընդունվել է 09.07.09թ. N 751-Ն).

10) “Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի նոյեմբերի 6-ի N 620 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշում (ընդունվել է 21.07.09թ. N 607-Ն).

11) “Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման մեջ լրացում կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում (ընդունվել է 16.04.09թ. N 400-Ն).

12) “Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ.

13) “Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի N 40-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում (ընդունվել է 15.10.09թ. N 1155-Ն). .

14) “Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 9-ի N 502 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ.

15) “Հայաստանի Հանրապետությունում նավիգացիոն համակարգերի ներդրման և մշտական գործող ՋԻՊԻԷՍ (գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգ) GPS ռեֆերենց կայանների ցանցի ստեղծման հայեցակարգը հաստատելու մասին” Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ.

